ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան 14/04/2025

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/4
# ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 22 անդամ:

Բացակա էին՝ Էդուարդ Բաբայանը, Վահե Հարությունյանը, Մելինե Գասպարյանը, Նաիրի Հակոբյանը, Վան Հարությունյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Աննա Չոբանյանը, Դիաննա Երեմյանը, Արմեն Շմավոնյանը, Արամ Վիրաբյանը, Ջանինա Սարգսյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Դավիթ Զաքոյանը

Նիստն արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը

Նախքան նիստի օրակարգի ներկայացումը Աշխատակազմի քարտուղարի կողմից Ավագանու անդամներին տրամադրվեց տեղեկություն նախորդ նիստի ժամանակ Ավագանու անդամների կողմից արված առաջարկությունների հիման վրա այլ մարմիններ համապատասխան գրություններ ուղարկելու գործընթացի և արդյունքների մասին:
Զեկուցողը նաև հայտնեց, որ Ավագանու անդամ Տիգրան Գեղամյանը նախքան նիստը նամակով դիմել է Աբովյան համայնքի ղեկավարին, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 21.1 հոդվածի, չի մասնակցելու օրակարգի 21-րդ հարցի քվեարկությանը:

ԼՍԵՑԻՆ

*ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ)*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 14-ի ութերորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կողմից քաղաքացիական հասարակության կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրման կարգն ու պայմանները հաստատելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին.

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 206-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 207-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին.

5) Աբովյան համայնքի կողմից մատուցվող ծառայության համար սահմանված տեղական վճարի վճարումից ազատելու մասին.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության «Մարդկային կապիտալի զարգացում» ծրագրի շրջանակներում Արամուս և Բալահովիտ գյուղերի նորակառույց մանկապարտեզների համար ձեռք բերված գույքն Աբովյան համայնքի հաշվեկշռում ընդգրկելու մասին.

7) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը հաստատելու մասին.

8) «Առինջ համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին.

9) Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց ներկայացնելու մասին.

10) «ԴԵՄԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

11) «ԴԱՅՆԱՄԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

12) «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

13) Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 230-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.

14) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 114-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

15) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքերն աճուրդային կարգով օտարելու մասին.

16) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 32/28/1 հասցեում գտնվող անշարժ գույքը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին.

17) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0130-0006 կադաստրային ծածկագրով 0.1266 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
18) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0305-0030 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
19) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 2/16 հասցեում գտնվող հողամասը Սիրակ Դադոյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
20) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Արամուս գյուղում գտնվող 07-013-0140-0052 կադաստրային ծածկագրով հողամասն Արամայիս Խաչատրյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
21) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Արամուս գյուղում գտնվող 07-013-0140-0050 կադաստրային ծածկագրով հողամասը Տիգրան Գեղամյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
22) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Առինջ գյուղի Բ թաղամասի 1-ին փողոցի 22/3 հասցեում գտնվող հողամասը Համիկ Միերյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
23) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Կարմիր բանակի փողոցի թիվ 5/27 հասցեում գտնվող հողամասն Առաքել Առաքելյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
24) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի թիվ 142/1 հասցեում գտնվող հողամասը Ջիվան Զարգարյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
25) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Արզնու խճուղու թիվ 18 հասցեում գտնվող հողամասը Կարեն և Արփինե Թովմասյաններին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
26) Սարգիս Այդինյանին սեփականության իրավունքով պատկանող հողաման Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին.
27) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով, մրցութային կարգով տրամադրելուն համաձայնություն տալու մասին.
28) Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 228-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
29) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
30) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողի կողմից նախագիծը ներկայացնելուց հետո, հաշվի առնելով մշտական հանձնաժողովներում կայացած քննարկումների արդյունքները, կատարվեցին հետևյալ առաջարկությունները.
Նախագծի՝

1. 1-ին կետի 4-րդ ենթակետը հանել օրակարգից,
2. նույն ենթակետը խմբագրել և օրակարգում ներառել Ավագանու այլ որոշման նախագիծ, այն է՝ «Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի N 30-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»:
Զեկուցողը նաև նշեց, որ նոր նախագծի ներառումը պայմանավորված է «Քաղաքաշինության, հողաշինարարության և անշարժ գույքի հարցերի» մշտական հանձնաժողովում կայացած շահագրգիռ քննարկմամբ և նույն հանձնաժողովի դիրքորոշմամբ:
Զեկուցողի առաջարկությամբ նիստի օրակարգը հաստատելու վերաբերյալ նախագիծը քվեարկության դրվեց առաջարկված փոփոխություններով՝ խմբագրված տարբերակով:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 47-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Հասարակական կազմակերպությունների մասին» և «Հիմնադրամների մասին» օրենքների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1.Հաստատել Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կողմից քաղաքացիական հասարակության կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրման կարգն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նախագծի վերաբերյալ դիտարկումներ կատարեց և համապատասխան առաջարկություններ ներկայացրեց Ավագանու անդամ Տիգրան Գեղամյանը: Դրանք ընդհանուր առմամբ հետևյալն էին.
Խմբագրել նախագծի հավելվածի՝
1. 3-րդ կետը՝ հաշվի առնելով, որ հիմնադրամի հիմնադիր կարող են լինել նաև պետական մարմինները,
2. 7-րդ կետի 3-րդ ենթակետը՝ սահմանելով տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափ՝ 1.5 մլն. դրամ,
3. 24-րդ կետի 3-րդ ենթակետը, այն ձևով, որ հանձնաժողովի անդամ հանդիսացող համայնքի բնակիչը մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված չլինի համայնքի ավագանու անդամների, աշխատակազմի աշխատողների հետ:
Առաջին կետով արված առաջարկության վերաբերյալ զեկուցողի կողմից հղում արվեց

«Հիմնադրամների մասին» օրենքի 12-րդ կետի 4-րդ մասին, իսկ մյուս առաջարկությունները համարվեցին ընդունելի:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 48-Ա)*

**LUbՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Ի գիտություն ընդունել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 49-Ա)*

**LUbՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 206-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ)***
Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և եկամուտների հաշվառման բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2025 թվականի մարտի 25-ի N Ք-1918), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2025 թվականի համար հաստատելու մասին» N 206-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին կետի «Հաստիքների թիվը» տողում «187» թիվը փոխարինել «188» թվով,
2) 2-րդ կետի «Աշխատողների թիվը» տողում «191» թիվը փոխարինել «192» թվով,
3) 3-րդ կետի «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» մասի 70-րդ տողի 3-րդ սյունակում «10» թիվը փոխարինել «11» թվով, 5-րդ սյունակում «3 320 000» թիվը փոխարինել «3 652 000» թվով, 74-րդ տողի 2-րդ սյունակում «Բնակավայրերի վարչական շենքի հավաքարար» բառերը փոխարինել «Կաթնաղբյուր բնակավայրի վարչական շենքի հավաքարար» բառերով, 3-րդ սյունակում «10» թիվը փոխարինել «1» թվով, 5-րդ սյունակում «1 300 000» թիվը փոխարինել «130 000» թվով,
4) հավելվածը 76-րդ տողից հետո լրացնել նոր 77-րդ և 78-րդ տողերով՝ հետևյալ բովանդակությամբ.
5) «Ընդամենը» տողի 3-րդ սյունակում «46» թիվը փոխարինել «47» թվով, 5-րդ սյունակում «12 017 000» թիվը փոխարինել «13 332 000» թվով:
6) «Ընդամենը» տողի 3-րդ սյունակում «187» թիվը փոխարինել «188» թվով, 5-րդ սյունակում «67 471 000» թիվը փոխարինել «68 786 000» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 77 | Պտղնի և Վերին Պտղնի բնակավայրերի վարչական շենքի հավաքարար | 2 | 191 000 | 382 000 |
| 78 | Առինջ, Արամուս, Գեղաշեն, Գետարգել, Բալահովիտ, Մայակովսկի, Կամարիս բնակավայրերի վարչական շենքի հավաքարար | 7 | 253 000 | 1 771 000 |

Ավագանու անդամ Տիգրան Գեղամյանի կողմից առաջարկ արվեց Աշխատակազմի ցրիչի պաշտոնի համար նախատեսված վարձատրության չափը որոշելիս հաշվի առնել նաև գյուղական բնակավայրերի բնակչության թվաքանակը՝ համեմատականներ անցկացնելով առանձին բնակավայրերի միջև:
Զեկուցողի և նիստը վարողի կողմից փաստվեց, որ կարևորելի են նույն աշխատանքը կատարող աշխատակիցների գնահատումը՝ հաշվի առնելով նաև համայնքների խոշորացումից առաջ տվյալ բնակավայրերում առկա խնդիրները:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-8 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 50-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

*ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահի 2025 թվականի ապրիլի 07-ի N Ֆ/1-030 գրությունը (մուտք՝ 2025 թվականի ապրիլի 7-ի N Տ-960), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի «Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Նաիրյան փողոցի թիվ 3 հասցեում գտնվող մարզահամալիրը վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին» N 30-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման վերնագրում և 1-ին կետում «վարձակալությամբ» բառը փոխարինել «անհատույց օգտագործման իրավունքով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 51-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

*ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ)*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի և հիմք ընդունելով «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրենի գրությունը (մուտք՝ 2025 թվականի մարտի 14-ի N Տ-749), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1.«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի «Կոտայք» մասնաճյուղի 10 երեխայի համար (ցանկը կցվում է) կիրառել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի կողմից մատուցվող ծառայության արտոնություն՝ վճարումից ազատել Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Գագիկ Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում գործող լողի խմբակներից օգտվելու համար՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 52-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐԱՄՈՒՍ ԵՎ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԵՐԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2025 թվականի մարտի 25-ի N Ք-1920), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Հայաստանի Հանրապետության կառավարության «Մարդկային կապիտալի զարգացում» ծրագրի շրջանակներում Աբովյան համայնքի Արամուս և Բալահովիտ գյուղերի նորակառույց մանկապարտեզների համար ձեռք բերված գույքը՝ 42 212 424 (քառասուներկու միլիոն երկու հարյուր տասներկու հազար չորս հարյուր քսանչորս) դրամ հաշվեկշռային արժեքով ընդգրկել Աբովյան համայնքի հաշվեկշռում՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 53-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 54-Ա)*.

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***«ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «է» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի մարտի 21-ի N 3009348 ակտը, լուծարման հանձնաժողովի կողմից 2025 թվականի մարտի 21-ին կազմված լուծարման հաշվեկշիռը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Հաստատել «Առինջ համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման հաշվեկշիռը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 55-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱՎԱՍՈՒ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՔԱՆԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության 2025 թվականի մարտի 25-ի N 05.1/05.9/6124-2025 առաջարկությունը (մուտք՝ 2025 թվականի մարտի 25-ի N Պ-723), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կողմից հայց ներկայացնելու վերաբերյալ առաջարկությանը և համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց

հարուցելու գործընթաց սկսել:
2. Լիազորել Աբովյան համայնքի ավագանու անդամ ------------------ Աբովյան համայնքի ավագանու անունից հանդես գալ սույն որոշման առաջին կետում նշված գործողությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ավագանու անդամ Տիգրան Գեղամյանը հայտնեց, որ «Իրավական հարցերի» մշտական հանձնաժողովի նիստ չի կայացել, իսկ թեկնածության հարցը թողնվել է ավագանու նիստին՝ առաջարկելով քննարկել «Հանրապետություն» խմբակցությունից որևէ անդամի թեկնածությունը: «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Հայկ Հարությունյանը հայտնեց, որ ներկա պահին պատրաստ չեն ստանձնել նման լիազորություն:
Առաջարկվեց նաև Ավագանու «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Արման Մեղրյանի թեկնածությունը: Վերջինս տվեց իր համաձայնությունը:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 56-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***«ԴԵՄԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2025 թվականի մարտի 25-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «ԴԵՄԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 2025 թվականի հունվարի 31-ի N Տ-284), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Տալ նախնական համաձայնություն «ԴԵՄԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուսի բազալտների հանքավայրի Դեմեր 3 տեղամասում իրականացնելու օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 57-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***«ԴԱՅՆԱՄԱՅՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2025 թվականի մարտի 25-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «ԴԱՅՆԱՄԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2025 թվականի փետրվարի 18-ի N S-495), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Տալ նախնական համաձայնություն «ԴԱՅՆԱՄԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուսի բազալտի հանքավայրի «ՏԻԳՐԱՆ-1» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք տրամադրելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամների կողմից լսվեց նաև նիստին ներկա «ԴԱՅՆԱՄԱՅՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, որին առաջարկվեց ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր՝ միաժամանակ տեղեկացնելով, որ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ հարցը կքննարկվի հետագայում՝ համայնքի ավագանու նիստում: Միաժամանակ նիստը նախագահողի կողմից առաջարկ արվեց՝ հարցը դուրս բերել օրակարգից:

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-0 Չի քվեարկել -22

Որոշումը չի ընդունվել.

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***«ԷԿՈ ԱԳՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ)*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2025 թվականի մարտի 21-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 2025 թվականի փետրվարի 14-ի N Տ-463), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Տալ նախնական համաձայնություն «ԷԿՈ ԱԳՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ գյուղի Մ. Մկրտչյան թաղամասի 1-ին փողոցի 32/2 հասցեում բնակելի թաղամաս կառուցելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 58-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 230-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2025 թվականի ապրիլի 01-ի, N Ք-2101) Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին» N 230-Ա որոշման հավելվածը լրացնել նոր՝ 5-րդ տողով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 59-Ա)*

LՍԵՑԻՆ

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 114-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 29-ի «Աբովյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման իրավունքով «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին» N 114-Ա որոշման հավելվածի 12-րդ և 13-րդ տողերը շարադրել նոր խմբագրությամբ.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | 3200020 | Ավտոմեքենա Թեթև-Մարդատար VAZ 21705 | 218CQ61 | 2022 | 0 |
| 13 | 3200018 | Ավտոմեքենա Թեթև-Մարդատար HYUNDAI ELANTRA 1.6 | 142CN61 | 2022 | 513 33,33 |

2. Համայնքի ղեկավարին՝ կազմակերպել փոխանակվող ավտոմեքենաների հանձնման - ընդունման գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 60-Ա)*

LՍԵՑԻՆ

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը և «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի ապրիլի 02-ի թիվ «175Դ-Վ/025», «175Է-Վ/025», «175Ը-Վ/025», «175Թ-Վ/025», «175Ժ-Վ/025» և «175Ի-Վ/025» մասնագիտական եզրակացությունները, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. 2025 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի

սեփականություն հանդիսացող շարժական գույքերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 61-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 32/28/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Աբովյանի համայնքապետարանի ծրագրերի, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2025 թվականի մարտի 06-ի, N Ք-1412) և «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի մարտի 14-ի թիվ «109/Վ-025» հաշվետվությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Համաձայնություն տալ 2025 թվականի ընթացքում մրցութային կարգով, վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով, 114 000 (հարյուր տասնչորս հազար) դրամ ամսական վարձավճարի մեկնարկային գնով, տրամադրել համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2019 թվականի փետրվարի 26-ի N 13032025-07-0029 վկայական), Աբովյան քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 32/28/1 հասցեում գտնվող անշարժ գույքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն՝ միաժամանակ առաջարկելով 25 տարվա փոխարեն ժամկետ սահմանել 10 տարի: Նախագիծը քվեարկության դրվեց առաջարկված տարբերակով:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 62-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-013-0130-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.1266 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)*

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 28-ի N 2/փ-77 դրական եզրակացությունը, հաշվի առնելով Կոտայքի մարզպետի 2025 թվականի մարտի 10-ի N 01/03.1/02054-2025 գրությունը (մուտք՝ 2025 թվականի մարտի 11-ի N Պ-581) և Դավիթ Տոուցյանի լիազորած անձ Սամվել Մեհրաբյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի նոյեմբերի 28-ի N Ք-8591), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Դավիթ Տոուցյանին պատկանող (հիմք՝ 2024 թվականի հոկտեմբերի 02-ի N 02102024-07-0130 վկայական) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0130-0006 կադաստրային ծածկագրով 0,1266 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի (վարելահող) նպատակային նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի՝ համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծի Արամուս գյուղի հատակագծերում կատարել համապատասխան փոփոխություն:

2. Դավիթ Տոուցյանը պարտավոր է 0,1266 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 3 655 575 (երեք միլիոն վեց հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր յոթանասունհինգ) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 63-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0305-0030 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ )*

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Արամ Գյոզչյանի հայտը (մուտք՝ 2025 թվականի մարտի 28-ի N Ք-1998), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Արամ Գյոզչյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի մարտի 01-ի N 01032024-07-0271 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0305-0030 կադաստրային ծածկագրով 0.1308 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի, բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներում) տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Գյոզչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 64-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԻՐԱԿ ԴԱԴՈՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)***

